

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Ք Ի Ի Ն



Քանի մը տղերով կ'ուզեն լուսաբանել վանական կեանքին առաջ անապատներ առանձնացող բարի փրստներաներուն անապատական կեանքին վիճակը եւ յետոյ գրել թէ ի՛նչ պատճառներէ մղուած նոյն բարեպաշտ փրստներաները քողուցին անապատական կեանք ու հիմնեցին մեծամեծ վանքեր որոնք վերածուեցան հոգեւոր կեանքի եւ կրօնական ուսման եւ աղօթքի սրբավայրերու։ Այս հիմնական բացատրութիւններէ վերջ պիտի գրենք հայկական վանքերու հիմնադիրքիւնը Ս. Երկրին, եւ մասնաւորապէս Երուսաղէմի մէջ, միեւնոյն ժամանակ ցոյց տալով այն պատճառները որոնք քանդեցին անոնցմէ շատերը։ Բայց միջանկեալ պիտի լուսաբանենք Երուսաղէմի Հայ Վանօրէից Յուցակը գրի առնող Անաստաս վանականին ինքնութիւնը՝ մանրամասնելով անոր մասին այն պատմական պարագաները զոր հաղած ենք օտար պատմիչներէն։ Ի վերջոյ կը փափաքինք բացատրութիւններ տալ ներկայ աշխատասիրութեանս բովանդակութեան եւ ուրիշ պարագաներու մասին։

Ա

Յ Բ Ո Ւ Ս Ս Ղ Է Մ Ի Ա Ն Ս Պ Ս Տ Ը

Վանական պատմութիւնը Երուսաղէմի Անապատ կը կոչէ այն ընդարձակ լեռնոտ միայնութիւնը՝ որ Ս. Քաղաքին արեւելէքն կ'երկարի հազար մէքր հակումով մինչեւ Յորդանան եւ Մեռեալ Ծով էր կը տարածուի հիւսիսէն հարաւ։ Այդ մասին պէտք է կցել Յորդանանի աջակողմի դաշտը՝ Երիփովէն սկսելով մինչեւ Ասփալտեան Լիճին հիւսիսը։

«Երուսաղէմի Անապատ» սահմանուած վերոյիշեալ նոյն հողա-